19531

3 ZL.5

Ca. 1911.

2010

371.5
Մ-99

ՓՈԽ-ԹԵՄԱԿԱԼ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻՆ

ՀԱՅՈՑ ԵՐԵՒԱՆԱՅ

N.

„……" …………… 191 թ.

ԵՐԵՒԱՆ։

…………… դպրոցի

Մեծարգոյ ……………

Ուղարկելով …………… դպրոցական մարմինների համար մշակած հրահանգները առաջարկում եմ այսուհետեւ առաջնորդուել նրանով

Փոխ-Թեմակալ Երեւանի Թեմի

[illegible] Քարտուղար

4 521-52
26436-Կ.Զ.
371.5
Մ-99

ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ։

Ա.

Վերստուգումներ

Ծխական դպրոցներում տարեկան վերջնական քննութիւնների փոխարէն լինելու են վերստուգումներ։ Վերստուգումներ պէտք է լինեն ուսումնական տարուայ ընթացքում երեք անգամ—երկուսը տարուայ ընթացքում, իսկ մէկը տարեվերջում։ Վերստուգումները պէտքէ տեղի ունենան երկու եղանակով. ա) մէկից աւել դասարաններ ունեցող դպրոցներում տեսչի, աւագ-ուսուցչի և յարմարաւոր դէպքում վերստուգող առարկաների հետ առնչութիւն ունեցող դասատուների ձեռքով, բ) մի դասատուն ունեցող դպրոցներում բաւականանալ ուսուցչի վերստուգումով։ Իւրաքանչիւր վերստուգութեան ժամանակ տեսուչը կամ աւագ ուսուցիչը պարտաւորէ վաղօրօք այդ մասին յայտնել հոգամարձութեանը։ Վերստուգման ժամանակ պէտքէ պատրաստ լինեն աշակերտների գնահատութեան ցուցակը և անցած նիւթի ծրագիրը։ Վերստուգումները պէտք է կատարուեն անցած նիւթերի շրջանում, ամփոփ հարցմունքներով ուղղուած ամբողջ դասարանին։

Լեզուներից և մաթեմատիքական առարկաներից բանաւոր վերստուգումների հետ միասին պէտքէ կատարուեն նաև գրաւոր վերստուգումներ։ Վերստուգումների արդիւնքը պէտք է արձանագրուի և վաւերացուի վերստուգողների կողմից։

Տարեվերջի վերստուգումները՝ թէ բանաւոր և թէ գրաւոր լինելու են աւելի ընդարձակ և ընդհանուր անցածից։

Բ

Գրաւոր աշխատանքներ։

Գրաւոր աշխատանքներին ոյժ տալու համար հարկաւորէ առանձին ուշադրութիւն դարձնել։ Ստորին դասարաններում (ա. բ. գ. և դ. տարի) իւրաքանչիւր դասին պէտք է առանձին ժամանակ նուիրել գրաւոր աշխատանքներին, լինեն նրանք արտագրութիւն, թելադրութիւն կամ շարադրութիւն։ Իսկ բարձր դասարաններում պէտքէ ունենալ շաբաթական ոչ պակաս երկու գրաւոր աշխատանք, մէկը դասարանական, միւսը տնային (թելադրութիւն, փոխադրութիւն, շարադրութիւն և այլն)։

Դպրոցը պէտքէ խնամքով պահպանէ աշակերտների տետրակները բոլոր առարկաներից ըստ հարկին դպրոցական վարչութիւններին ներկայացնելու համար։

Գ.

Դպրոցական տարի։

Կանոնաւոր ուսումն պէտքէ սկսել սեպտեմբերի մէկից և վերջացնել Յունիսի 1-ին։ Այն շրջաններում, որտեղ հարկաւոր չէ սկսել սեպտեմբերի 1-ին- թեմական տեսուչների զեկուցման համաձայն, առանձին կարգադրութիւն կը լինի թեմական իշխանութեան կողմից։

Դ.

Դասերի տեւողութիւնը, դպրոց և ընտանիք։

Դասերի տեւողութիւնը լինելու է 50 րոպէից ոչ պակաս։

Դպրոցի և ընտանիքի յարաբերութիւնները ուժեղացնելու և ծնողների պարտականութիւնները պարզելու համար անհրաժեշտ է ոյժ տալ ծնողական երեկոյթներին,

ամեն անգամ որոշ դասախօսութիւններով պարզել դպրոցի և ընտանիքի սերտ կապակցութեան նշանակութիւնը։ Նոյնպէս անհրաժեշտ է ունենալ դպրոցական հանդէսներ գրականական երեկոյթներ և ներկայացումներ։

Ե

Աշակերտներ արձակելու մասին։

ա) Ամեն կերպ աշխատել փոքրի պատճառով աշակերտ չարձակել դպրոցից։ Շատ բացառիկ դէպքերում, երբ ամեն տեսակ մանկավարժական միջոցներ գործադրուած են և հնարաւոր չի եղել ուղղել, այն դէպքում հոգաբարձական և մանկավարժական խառն ժողովում ձայների բազմութեամբ որոշել-արձակել և պատճառաբանուած բացատրութիւն տալ թեմական առաջնորդին կամ թեմական տեսչին։

բ) Ամեն կերպ աշխատել հնարաւոր միջոցների դիմել, որ աշակերտները երրորդ տարին չը մնան դասարանում. հակառակ դէպքում (եթէ նա հիւանդ չէ) թողնել հոգաբարձական և մանկավարժական խառն ժողովի բարեհայեցողութեան (երրորդ տարին թողնել դասարանում, փոխել հետևեալ դասարան կամ արձակել)։

Զ

Դպրոցական գրադարաններ։

Իւրաքանչիւր դպրոցի հոգաբարձութիւն ամեն տարի պարտաւոր է որոշ գումար յատկացնել դպրոցական գրադարանի և ուսումնական պիտոյքների համար (ֆիզիքական, քիմիական, բնագիտական և այլն)։

Գրադարանի գրքերի ընտրութիւնը պէտքէ լինի բարձր ուսումնական իշխանութեան կողմից ուղարկուած գրքերի գրացուցակից։ Հնարաւոր դէպքում ցանկալի է կազմել նաև ուսուցչական գրադարան և այնպայման ստանալ մանկավարժական թերթեր։

Է

Դպրոցական շէնք։

Նոր շինուելիք դպրոցի համար հոգաբարձութիւնը պէտք է դիմէ թեմական իշխանութեանը և նրա առաջարկած յատակագծի համաձայն շինէ։

Փոխ-Թեմակալ Երևանի Խորէն եպիսկոպոս Մուրադբէգեան:

1-ն Յունուարի 1911 թ.
Երևան: